



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 • 212-MU 6-0710

Թիւ 22829
Փետրուար 3, 1971

Հոգեշնորհ
Տ. Փիրայր Վրդ. Թաշճեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Ժիական Խորհուրդի
Թօրօնթօ.

Սիրելի Հայր Փիրայր,

Ստացած ենք 1971 Յունուար 27 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ 2եր Նախագահութեամբ՝ Յունուար 24ին գումարուած 2եր Ժիական ժողովին մէջ կատարուած է Ժիական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ 2եր Ժիական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան դրկել Ժիական Խորհուրդի նորընտիր Կիւանի անդամոց եւ Եկեղեցւոյ ընթացիկ մարմիններու ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԽՈՐԿՈՄ ԱՐՔԵՂՈՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Գարգեւ Խոճաճեան
Ղեւոնդ Խճարովեան
Ստեփան Սեմերճեան
Յարութիւն Արթինեան
Եղուարդ Տէօվլէթեան